

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/5

26 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Արթուր և Վարուժան» ՍՊԸ-ի 01.12.2014 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ ՕՀ և ՆԱԳՎ 19.11.2014 թ-ի թիվ 1411919 վարչական ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքին համապատասխան իրականացված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ «Արթուր և Վարուժան» ՍՊԸ-ն չունենալով համապատասխան լիցենզիա, Վայոց Ձորի մարզի Գնիշիկ համայնքի վարչական տարածքում զբաղվում է ընդերքչահագործման ապօրինի աշխատանքներով: Մասնավորապես, համաձայն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունից ստացված գրության, «Արթուր և Վարուժան» ՍՊԸ-ն ընդերքօգտագործման աշխատանքներ է իրականացրել թույլտվությամբ սահմանված տարածքից դուրս, որտեղից արդյունահանվել է ընդհանուր առմամբ 3541.1 մ<sup>3</sup> լեռնային գանգված: Նշված փաստի վերաբերյալ ՀՀ ՖՆ ՕՀ և ՆԱԳՎ ՕՀՎ աշխատակիցների կողմից 18.11.2014 թ-ին կազմվել է թիվ 1411919 արձանագրությունը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ՖՆ ՕՀ և ՆԱԳՎ ՕՀՎ 6-րդ բաժնի պետի կողմից 19.11.2014 թ-ին ընդունվել է թիվ 1411919 վարչական ակտը, որով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ գումարով 5.500.000 դրամ:

Նշվեց նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում փաստաթղթեր են ստացվել «Արթուր և Վարուժան» ՍՊԸ-ի վերաբերյալ, որոնք անմիջականորեն առնչվում են սույն գանգատին:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչությունում նյութեր են նախապատրաստվում «Արթուր և Վարուժան» ՍՊԸ-ի կողմից վերոգրյալ վարչական ակտում նկարագրված խախտումը կատարված լինելու փաստի կապակցությամբ և անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, հետևապես ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի

դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Արթուր և Վարուժան» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### **ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝**

«Արթուր և Վարուժան» ՍՊԸ-ի 01.12.2014 թ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**

  
  
**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**